ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հոկտեմբերի 2020թ. թիվ 891-Ա

ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 02.06.2000թ. N 102 հրամանը, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Մարզային ենթակայության կազմակերպություններում մինչև սույն թվականի նոյեմբերի 30-ը անցկացնել 2020թ. տարեվերջյան գույքագրումներ:

2. Գույքագրման արդյունքների հավաստիության, ճիշտ և ժամանակին կատարման պատասխանատվությունը դնել կազմակերպությունների ղեկավարների վրա:

3. Գույքագրումների կատարման վերահսկողությունը դնել մարզպետարանի համապատասխան վարչությունների վրա:

4. Գույքագրման արդյունքները ներկայացնել մարզպետարան մինչև 2020թ. դեկտեմբերի 15-ը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

10/25/2020

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 25
ք.Վանաձոր